МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT REPUBLIC OF ARMENIA
YEREVAN STATE UNIVERSITY

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

22, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian st., Yerevan, 0025, Republic of Armenia
(+374 10) 55-47-52, (+374 10) 55-46-41 (Fax), info@ysu.am, www.ysu.am

«31» հունվար 2024թ.

«ԴՈՆԵՌ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ
(ՀՎՀՀ՝ 01052798,
հասցե՝ «ք.Երևան Գայի 51/5»,
էլ.փոստ՝ «donernorq@yandex.ru»)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգելի պարոն Հայրապետյան,

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կողմից 2023 թվականի հոկտեմբերի 23-ին տեղեկագրում (www.gnumner.am) հրապարակվել է կահույքի և տեխնիկայի ձեռքբերման «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/106» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ): Ի թիվս այլ մասնակիցների Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացվել նաև «ԴՈՆԵՌ» ՍՊ ընկերության կողմից (հվհհ՝ 01052798, այսուհետ՝ Ընկերություն):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 21-ի երկրորդ նիստի արձանագրության 8-րդ կետով Ընկերությունը Ընթացակարգի հրավերի 1-ին, 2-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից, իսկ 2023 թվականի դեկտեմբերի 14-ին ԵՊՀ և Ընկերության միջև կնքվել է «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/106-1» ծածկագրով և 10,578,994.80 (տաս միլիոն հինգ հարյուր յոթանասունութ հազար ինը հարյուր ինսունչորս դրամ և ութսուն լումա) ընդհանուր գնով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 8.15 կետի համաձայն «Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է **այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով**: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար

Կատ.՝ Գնումների կազմակերպման վարչություն
Հեռ.՝ 060-71-00-10

ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում է նախորդ համաձայնագրով սահմանված ապրանքի մատակարարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, **Վաճառողը համաձայնագիրը կնքում, և տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է**»:

Հաշվի առնելով վերոգրյալը, դեռևս 2023 թվականի դեկտեմբերի 22-ին Ընկերությանը էլ. փոստի միջոցով համապատասխան համաձայնագիր կնքելու առաջարկ է ներկայացվել, սակայն այն սահմանված ժամանակահատվածում չի կնքվել, ուստի Ընկերության կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորությունները չեն կատարվել:

Վերոնշյալ փաստական հանգամանքների լույսի ներքո՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի պահանջները, ԵՊՀ-ն որոշել է պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ Ա. Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

Կատ.՝ Գնումների կազմակերպման վարչություն
Հեռ.՝ 060-71-00-10